ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 61

«20» օգոստոսի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի օգոստոսի 12-ին կայացած թիվ 8 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր « 6 » թերթ:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 7665-13
«22» 08 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

---

## ՈՐՈՇՈՒՄ 30-Ա

«12» օգոստոսի 2013թ. թիվ 8 արտահերթ նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի օգոստոսի 12-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Գրիգորյան | [signature] | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | [signature] | ---------------- | ---------------- |
| Խ. Տերտերյան | [signature] | ---------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2013թվականի օգոստոսի «12»
գ. Լուսագյուղ

Հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի օգոստոսի 12-ի
թիվ 8 արտահերթ նիստի
N 30-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013թվականի օգոստոսի 12-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ 2013 թվականի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

3/ Առաջին դասարանցիներին նվերներ գնելու համար գումար հատկացնելու մասին.

4/ Դրամական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ 31-Ն

«12» օգոստոսի 2013թ. — թիվ 8 արտահերթ նիստ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 15-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 62-րդ հոդվածի հինգերորդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թվականի մայիսի 8-ի N 545-Ն որոշման N5 հավելվածի 6.19 կետը, 2013 թվականի հունիսի 27-ի N661-Ն որոշման N7 հավելվածի N 5 աղյուսակի 19-րդ կետը, Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013թվականի հուլիսի 31-ի N 28- Ա որոշումը, և գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի «2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Գրիգորյան | ------------ | ------------ | ------------ |
| Գ. Սարգսյան | ------------ | ------------ | ------------ |
| Խ. Տերտերյան | ------------ | ------------ | ------------ |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ — Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2013 թվականի օգոստոսի «12»

գ. Լուսագյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի օգոստոսի 12-ի թիվ 8
արտահերթ նիստի N 31 -Ն որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐԱԾ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. 2013 թվականի բյուջեի եկամտային մասում կատարել լրացումներ.

1/ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 1261 տողին ավելացնել 10 000 000 (տաս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ,
2/ պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 1257 տողին ավելացնել 162 700 (մեկ հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. 2013 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել լրացումներ և փոփոխություններ.

1/ գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդեր) ծրագրի վարչական մասի հաստատված «520 500» թիվը փոխարինել «0» թվով,
2/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 2, դաս 2 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4637 հոդվածին հաստատել « 520500» թիվը,
3/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 ծրագրի, տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածին հաստատել «10 000 000» թիվը,
4/ գործառական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 ծրագրի, տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի «9 290 000» թիվը փոխարինել «9 452 700» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

---

## ՈՐՈՇՈՒՄ 32-Ա

«12» օգոստոսի 2013թ. — թիվ 8 արտահերթ նիստ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեով հաստատված «Այլ մշակութային կազմակերպություններ»՝ 0824 ծրագրի «Նվերներ»՝ 4237 հոդվածից «Գիտելիքի, գրի և դպրության» օրվա կապակցությամբ 100 000 / մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ գումար հատկացնել Լուսագյուղի միջնակարգ դպրոցի առաջին դասարանցիներին նվերներ գնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Գրիգորյան | ---------- | ---------- | ---------- |
| Գ. Սարգսյան | ---------- | ---------- | ---------- |
| Խ. Տերտերյան | ---------- | ---------- | ---------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ — Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2013թվականի օգոստոսի «12»

գ. Լուսագյուղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ

---

## ՈՐՈՇՈՒՄ 33-Ա

«12» օգոստոսի 2013թ. — թիվ 8 արտահերթ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5 -րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի կարկտահարությունից տուժված բնակիչ՝ Ասատուր Սիմոնյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ գումար՝ դրամական օգնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Գրիգորյան | [signature] | ---------- | ---------- |
| Գ. Սարգսյան | [signature] | ---------- | ---------- |
| Խ. Տերտերյան | [signature] | ---------- | ---------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ — Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2013թվականի օգոստոսի «12»
գ. Լուսագյուղ